



## Ամանորը կենդանաբանական այգում

Երևանի կենդանաբանական այգին դեկտեմբերի 25-ին, 26-ին և 27-ին ժամը 12-ից 16-ը, բոլորին հրավիրում է մասնակցելու ամանորյա գունեղ միջոցառումների: Թատերական ներկայացումներ, ուրախ խաղեր, մրցույթներ, խալիքների և ամանորյա զարդարանքների տոնավաճառ և սառցե քանդակների բացօթյա ցուցադրություն:

Միջոցառման բոլոր օրերին այցելուները հնարավորություն կունենան անձամբ հետևել, թե ինչպես են պատրաստվում սառցե քանդակները, զրուցել քանդակագործների հետ:

Երևանի կենդանաբանական այգու Ձմեռ պապն այս տարի փոքրիկներին կդիմավորի քաղաքում իր նմանը չունեցող տոնածառի մոտ: Պլաստիկ շշերից պատրաստված ձեռակերտ ծառը շուրջ 5 մ բարձրություն կունենա: Այլընտրանքային տոնածառի պատրաստման համար «Բջի» ապրանքանիշի 1 և 1,5 լիտրանոց ավելի քան 2500 շիշ է օգտագործվել:

Միջոցառումների շարքը կլինի բարեգործական՝ ամանորյա միջոցառումները դարձնելով հասանելի բոլորին, այդ թվում նաև մանկատների, հատուկ դպրոցների, անապահով ընտանիքների երեխաների համար:

Տոնական օրերին մինչև 16 տարեկանների համար այգու մուտքն ազատ է:

## Արտասահմանցի մասնագետները նախագծում են այգու գլխավոր հատակագիծը




Երևանի կենդանաբանական այգու Նոր գլխավոր հատակագծի նախագծման աշխատանքներն արդեն մեկնարկել են: Նոյեմբերի 9-ից 14-ը աշխատանքային այցով Երևանում էին միջազգային ճանաչում ունեցող մի խումբ մասնագետներ, ովքեր անվճար հիմունքներով ստանձնել են Երևանի կենդանաբանական այգու գլխավոր հատակագծի նախագծումը:

Նոյեմբերի 11-ին այգու հատակագծի վրա աշխատող մասնագետները հանդիպեցին նաև լրատվամիջոցների ներկայացուցիչներին: Հանրությունը հնարավորություն ունեցավ ծանոթանալու հատակագծի նախնական գծագրերին, պարզելու, թե ինչ կառուցվածք և լանդշաֆտային ձևավորում կունենա Երևանի կենդանաբանական այգին հիմնական վերանորոգումից հետո, ինչ նորամուծություններ կմտցնի այդ փոփոխությունը այգու կենդանիներին ներկայացնելու, նրանց խնամքի և պահպանման գործընթացների մեջ: Կենդանաբանական այգիների նախագծման ոլորտում երկարամյա փորձ ունեցող մասնագետների կողմից պատրաստված նախնական հատակագիծը կամբողջացվի առաջիկա 1 տարվա ընթացքում:

Հատակագծի վրա աշխատող մասնագետների ցանկում են Ամստերդամի «Արթիս» թագավորական կենդանաբանական այգու տնօրեն Հայկ Բայլանը (Haig Balian), Մինգապուրի կենդանաբանական այգու նախկին տնօրեն, կենդանաբանական այգիների աշխարհահռչակ նախագծող Բերնարդ Հարիսոնը (Bernard Harrison), կենդանաբանական այգիների դիզայներ Դեյվիդ Հենքոքսը (David Hancocks), Ամստերդամի «Արթիս» թագավորական կենդանաբանական այգու համակարգող Յանոշ Սանթո (Janos Szantho), Ամստերդամի «Արթիս» կենդանաբանական այգու նախկին գլխավոր կենդանապահ Վիլեմ Մայլինքը (Willem Meijlink), «Բերնարդ Հարիսոն և ընկերներ» ընկերության համասեփականատեր Թինա Լիմ Լոնգը (Tina Lim Long), լանդշաֆտային ճարտարապետ Թայս դե Չեուն (Thijs de Zeeuw), լուսային դիզայներ Սայմոն Կորդերը (Simon Corder):



## Ամանորը՝ կենդանի տոնածառով



Եթե որոշել եք Ամանորը դիմավորել կենդանի տոնածառով, սակայն չեք ուզում ծառահատումների մասնակից դառնալ, Երևանի կենդանաբանական այգին այլընտրանքային՝ բնապահպանական տարբերակ է առաջարկում:

Ամեն տարի՝ Նոր տարվա տոներին ընդառաջ հայաստանյան անտառներից, ծառահատումների արդյունքում, բազմաթիվ փշատերևներ են անհետանում: Իսկ տներից հետո Ամանորի կենդանի խորհրդանիշները հայտնվում են աղբանոցում: Եթե դուք կարևորում եք Ամանորին տանը բնական տոնածառի անկայությունը, եղևինների և սոճիների վարձակալությունը կարող է հարցի լուծման հրաշալի միջոց դառնալ:

Ցանկացողները հնարավորություն կունենան դեկտեմբերի 15-ից գալ Երևանի կենդանաբանական այգի և անձամբ ընտրել իրենց ծառը: Կազմակերպիչներն ավելի ուշ՝ պատվիրատուին հարմար ժամկետներում, ծառը կառաքեն նշված հասցեով:

Ծառերի հետ կտրվի տվյալ ծառատեսակի խնամքի և պահպանման վերաբերյալ տեղեկատվական թերթիկ, որը կօգնի այն պահել անվնաս: Վարձակալության դեպքում ծառերը պատվիրատուի բնակարանում կարող են մնալ մինչև հունվարի 15-ը:

Եղևնու վարձակալության արժեքը 25.000 դրամ է: Ձեռքբերման համար պետք է վճարել 40.000 դրամ: Առաքումը Երևանի տարածքում անվճար է:

Գնելու դեպքում ծաղկամանով ծառերը Ծննդյան տոներից հետո կարող եք նվիրաբերել որևէ կրթօջախի կամ գարնանը տնկել ձեր իսկ տան կամ շենքի բակում:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք (+37410) 555 209, (+37494) 482 218:



մի՛ կտրիր, վարձակալի՛ր  
Be Green, Rent Your Christmas Tree  
010-55-52-09  
094-48-22-18  
[www.sunchild.org](http://www.sunchild.org)

## Նոր ցուցանակները շուտով պատրաստ կլինեն



Կլինի տվյալ կենդանատեսակին առնչվող հիմնական ինֆորմացիան՝ ինչով է սնվում կենդանին, հղիության կամ թխսելու ժամանակահատվածը, քանի ձագ է ունենում, ինչքան է կյանքի տևողությունը և իհարկե, թե աշխարհի որ մասերում է այն առավել տարածված: Ի դեպ, եթե կենդանուն կարելի է հանդիպել նաև մեր երկրում, ապա ցուցանակի այս հատվածում աշխարհագրական տեղանունների կողքին նշված կլինի նաև Հայաստանը:

Նոր ցուցանակների վրա տեղեկություններից զատ տեղադրված կլինի նաև տվյալ կենդանատեսակի լուսանկարը և վերջինիս տարածվածությունը պատկերող քարտեզ:

Երևանի կենդանաբանական այգու կենդանիները Նոր տարին կդիմավորեն Նոր ցուցանակներով:

Կենդանիների Նոր ցուցանակներն էականորեն տարբերվելու են այգու այցելուներին արդեն իսկ ծանոթ հին օրինակներից: Նոր ցուցանակների վրա տեղեկությունը ներկայացված է միաժամանակ 3 լեզվով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Ցուցանակի վրա գետեղված

